

ՏԱՍՆ ԵՒ ԵՐԵՎԱՆԻ ՏԱՐԻ



Տարեկան գինը 10 ռուբլի է, կես տարեկանը 6 ռուբլի:
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
Կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրությունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնները համար վճարում են
Իւրաքանչիւր բառին 2 կոպեկ:

ՆԵՐԿԱՅ 1889 ԹԻՒՆ

ՄՇԱԿ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՒՄ

Հրատարակվում է Թիֆլիսում, նոյն դիրքով և նոյն պրոպագանդայով: Մենք ստանում ենք սեփական ՀԵՌԱԳՐԱԿԱՆ:
«ՄՇԱԿ» տարեկան գինը 10 ռուբլի է, կես տարեկանը 6 ռուբլի:
Գրվել «ՄՇԱԿ» կարելի է ՍՊԵՍՏԱՆՆԵՐ (Բարձրագույն և Բարձրագույն փողոցների անկիւնում Թաւմաշեփի տանը):
Կայտարարութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿ» գրվելու համար պէտք է դիմել հետևեալ հասցեով. ТИФЛИСЪ, Редакция газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK».

Խմբագիր-հրատարակող ԳԻՐԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

Հայի յատկանիշը.—ՆԵՐԿԱՅ ՏԵՍՈՒԹԻՒՆ, կըրկին մի դիմ գիւղական կեանքից. Գիւղատնտեսական ընկերութեան ժողովը. Նամակ խմբագրին. Նամակ խմբագրին. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Տեղեկութիւններ թիւրքացի Հայաստանից. Արաքսի լուրեր.—ՀԵՌԱԳՐԱԿԱՆ.—ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Սալմէ Նորատուհեան:

ՀԱՅԻ ՑԱՅԿԱՆԻՇԸ

Անաղթալի հայոց դպրոցում նորերումս պատահած անախորժ, նոյն իսկ խայտառակ դէպքը շատ ընտելի է հայի յատկութեան համար, առհասարակ:
Հայը, առհասարակ, չէր գիտէ, սովոր չէր յարգել եղած կանոններն ու կանոնադրութիւնները, հայը չէր գիտէ ենթարկվել զինքն իր իշխանին...
Թեմական դպրոցի հոգաբարձութիւնը, որ լիակատար իրաւունք ունի հրաւիրել և արձակել ուսուցիչներին, արձակում է մի ուսուցիչին: Ուսուցիչը չէ ուզում խոնարհվել և իրան իրաւունք է համարում բողոքել հոգաբարձութեան դէմ:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՍԱԼՏԻՆԻ ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ

Նոյեմբերի 30.—Այս վերջին օրերը մայրս ու Սալտին օրերէն ամենայն օր ինձ կայցելէին: Երեկ իրիկուն նրանց հետ միասին մօլլա Սիմօն էլ մեզ մօտ էր: Նկատել էի, որ մօրս ու Սալտին մի միտք տանջում է, ուզում են հետ մի բանի վրա խօսել, բայց չեն կարողանում: Ուղղակի ոչ մի բան չեն ասում, բայց նրանց կողմնակի հարց ու փորձը անսահման վրդովմունքի մէջ է գցում ինձ... Գալիս են մի երկու ժամ նստում են ինձ մօտ, սրա նրա անախորժ ընտանեկան կեանքից մի քանի օրինակներ պատմում ու զննում: Երեկ, ասում եմ, Սիմօն էլ նրանց հետ էր: Սա մի բոլորովին այլ առարկայի վրա խօսելու ժամանակ յանկարծ խօսքը փոխեց ըսկից նոյն նիւթի վրա ձառնել:
—Ինչ արած, դիմաց ինձ մօլլա Սիմօնը.—էլի օրհնվի մեր օրհնքը՝ կընկայ թագն ու պսակը նրա գլխին կանգնած տղամարդն է, ինչքան էլ էղ պսակը փշուր լինի՝ կընկը պիտի տանի, որովհետև ինքը՝ որդին Աստուծոյ՝ մեր փրկիչ Յիսուս Գրիգորը...
—Մեռնեմ նրա ողորմութիւնին, միաձայն բա-

ցականչեցին Սալտին ու մայրս, խաչակրելով երանները:
—Մեռնեմ նրա արգար դատաստանին և ողորմութեանը, աւելցրեց իր կողմից Սիմօնը և շարունակեց.—մեր Փրկիչը՝ Յիսուս Գրիգոր, որ թոյլ տուեց փշերից պսակ դնել իր գլխին՝ էղ խոնարհութեան օրինակ տուեց մեզ: Միթէ չէր կարող նա իր հրեշտակներին հրամայել, որ ձեռներին կրակի ուռը առած համ Պիղատոսին, համ նրա զինուորներին աշխարհի երեսից ջնջէին, բայց չէ՝ նրան ձեռնում են փշերից պսակ են դնում գլխին, ծիծաղելու համար ծիրանի հանդերձներ են հագցնում, թըռում են ու մրտադու են նա լուռ ու մունջ ամեն բան տանում է... Էղ պէս էլ մինը պիտի լինէր, որ արժանանար նրա անթաւան պսակին և հայր Աբրահամու ծնկի վրա նստեց արքայութեան մէջ ու էսպէս յաւիտենական կեանք վայելէր:
—Վայ մեզ, վայ մեզ, աչքերը սրբելով խօսեց Սալտին.—մեր մեղքը մենք պիտի քաշենք...
Սա խօսքը կարում է մայրս: Այնպիսով ինչ-որ բան ձանձրացած, սա խօսքը բերում է այն հարցերին, որոնք երկի վերջին ժամանակ մեծ մեծ տատանջութիւններ են նրան պատճառել:
—Էս ո՞ր սաղ օրը Պիղատ վասիլիքը, յանկարծ հարցնում է նա.—դուրսդ չուրի, գործ չուրի, ախր թեղ կսպէս մենակ սաղ օրը ինչու ա թողնում... Ախր մին ասա տեսնեմ ինչ բանով ա պարագած նա է... Ախ, ախ, ախ... Այ կրակ, ջուրը տանէր ինձ, որ էսպէս օրեր չը գային մեր գլուխը, ծնկներին խփելով, արտա-

անձը և իր անձնական իրաւունքը բոլոր եղանակներով կանոնադրութիւններից վեր դասելը, կամայաբար վարվելը, անխիտանական հակառակորդի քաջալերելը,—հա մեր յատկանիշը:
Եւ մեր մամուլը, փոխանակ ներշնչելու մեր դէպի կարգ ու կանոնը, սէր դէպի կանոնադրութիւնն ու օրինականութիւնը, մեր մամուլը, ասում ենք, ընդհանրապէս ջանում է ներշնչել ժողովրդի մէջ հակում դէպի որ և է հեղինակութեան մեթոդը, հակում դէպի որ և է զիջողական քանդակը, ոտնակոխ անելը:
Մի որ և է կառավարչական երարկայի մէջ օրինականութիւնը յարգելու, հաստատված զիջողականութիւն ենթարկվելու օրինակը պէտք է ցոյց տան միշտ այդ երարկական ստեղծութիւն ամենաբարձր աստիճանների վրա կանգնածները: Երբ նրանք կը յարգեն օրինականութիւնը և հրատարակված կանոնադրութիւնը, նոյնը պարտաւորված կը լինեն անկէ և ստորագրել օրհանգրգանքներ:
Մեր խօսքը հաստատելու համար կը բերենք այստեղ այն մարդու խօսքերը, որ ինչ ոչ աք չէ կարող կասկածել, թէ նա արմատական եղած լինէր, բայց որը վախճաններով թաւանակներում ազատամիտ էր, իսկ փերջը միայն օտարիկ յետադէմ դարձաւ:
Բերում ենք այստեղ Վատիկանի խօսքերը, որը նա գրել էր 1863 թւին, երբ հոգով և օրով դեռ պատկանում էր ազատամիտ կուսակցութեան: Ոչ մի կառավարչական մարմին, ասում էր Վատիկան, չէ կարող անտես առնել օրինականութիւնը, քանի որ միմյանց ամուր օրինականութեան միջոցով ազատվում է թէ ամեն հասարակութեան և թէ նոյն իսկ կառավարութեան զոյգութիւնը: Ոչ թէ քաղաքական խելքը, այլ միայն քաղաքական անխելքութիւնը կարող է օրինականութիւնը մի արդեւորութիւն և կորստաբեր պայման համարել որ և է կառավարչական մարմին համար:
Իսկ մեր հայոց եկեղեցական և դպրոցական այլ և այլ իշխանութիւնները կարծում են որ ոչ ոք նրանում է կայանում, սուրբ աչքերին, սգում է մայրս:
Յաւանայից իմ աչքերն էլ պղտորվում են արցունքով, բայց ձայն ու ծպտում չեմ հանում:
—Ինչ էլ երկուսդ, սաղ օրը դատարան... Տան փերջը քաշեմ՝ թէ դանակի, արդէն բացարձակ լալով կրակ էր տալի այս լալված տեսաբանին Սալտին.—ասա սեանար էն օրը, որ նա մեզ առատ չը դար:
—Ինչ էր ուզում ինձանից, բողոքում էի ես հեկեկանքից խեղճվելով.—ինչ էր սև սուգ բաց արել իմ գլխիս...
Սոյն իսկ րօպէին դուռը բացվում է և Պիղատ վասիլիքը, երեքալուր ներս է մտնում: Նրա ետևից դրան սեամում երեւում է Նիդազարի ահ ու զոյգով պատած երեսը:
—Ну, что собрались?! հաղիւ հաղ տոի վրա կանգնած, լեղուն կայելով հարցնում է Պիղատ վասիլիքը.—отвѣчайте-же! Огложда...! համեմում է իր խօսքը սոյգաթի ամենակեղտոտ հայհոյանքով... То-то же!!
—Ը, բ... թու օրն ու ուրբը խաւարի. դարձակ նստի թու մէր թեղանից, թեղ տեսնեմ ջանիք վը վրա բերելու, ծվում է մայրս:
—Что? что? ахъ ты чертова кукла... Պիղատ վասիլիքը յարձակվում է մօրս վրա: Եղիւրդար ու Սիմօնը, չը նայելով նրա բուռն ընդդիմադրութեանը, քաշում տանում են՝ նրան միւս սենեակ... Այնտեղից էլ ինչ հայհոյանքներ որ տեսն թափում է մօրս վրա, իսկ այս տեղից մօրս ու Սալտին ծվովանքը երկինք է հասնում:

որ նրանցից ամեն մէկը կաշխատի ոտնակոխ անել օրինականութիւնը, խախտել իրանց ստորագրեալ իշխանութեան իրաւունքները, որպէս զի իրանք աւելի ոյժ և նշանակութիւն ստանան կամայականութեան միջոցով:
Կամայականութիւնը ոյժ չէ, այլ թուլութիւն է, որովհետեւ երբ մէկ անգամ սկսվել է, այնպէս էլ շարունակվում է նոյն երարկայի միւս աստիճանների վրա, այլ իսկական ոյժը՝ միմյան օրինականութեան յարգելն է:
Գ. Ա.
ՆԵՐԿԱՅ ՏԵՍՈՒԹԻՒՆ
ԿՐԻՒՆ ՄԻ ԳԻՏ ԳԻՒՂԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ
—Շատ անգամ առիթ ենք ունեցել խօսելու այն պայմանների մասին, որոնք այսպէս թէ այնպէս սղոյթում են Անդրկովկասի գիւղական ժողովրդի կեանքին ընթացքի վրա:
Սակայն մեր գիւղական կեանքի մէջ կայ մի տարր, որը ներկայումս բաւական ներգործող դեր է կատարում գիւղական հասարակութեան վրա, և որը, այնու ամենայնիւ, անուշադրութեան է եղել մատնված, և չէ արժանացել հրապարակական ըննադատութեան:
Մեր խօսքը գիւղական տանուտէրերի և գիւղական դատաւորների մասին է:
Յայտնի է, որ Անդրկովկասում գիւղական հասարակութիւնների մէջ գիւղի վարչական մասը գտնվում է տանուտէրի ձեռքին, որը շատ տեղ կոչվում է մէլիք, կամ քեօլվայ, և ունենում է մի օգնական, իսկ դատաստանական մասը գտնվում է երեք դատաւորների ձեռքում, որոնք ունենում են իրանց կանգի դատները: Նրանք բոլորն էլ ընտրվել են, այսինքն ընտրվում են ժողովրդի կողմից:
Մենք երկար բացատրութիւնների մէջ չենք մտնի ցոյց տալու համար թէ ինչ մեծ կարեւորութիւն ունեն գիւղական տանուտէրերը և մասամբ էլ դատաւորները մեր գիւղական հասարակութեան մէջ:
—Բնիկ պէս շարժատանը, պիտիցան, ինձ վրա ձեռք բարձրացնին... Ես էս սահաթին պօլիցա կանչել տամ, որ թեղ ծակել կոխեն. դեռինք մանի թո հարբան պլուրին, թո հօր ոսկորները դեռեղմանում չան ու գէլի փայ ընի. թո մօր մէջքը չորանար, որ քեղ պէս անառակին չը բերէր...
Աստուած իմ, Աստուած, այս ինչ խայտառակութիւն էր. փողոցից մինչև անգամ մարդիկ էին գալի, կարծելով թէ այստեղ արիւնհեղութիւն է տեղի ունեցել: Դժոխք էր միանգամայն դարձել մեր տունը: Ինձ վրա մահալան դող էր եկել: Չէի հասկանում թէ ինչ էր կատարվում աչքիս առաջին: Ո՞չ անպիտան և անարգ կեանք է այդպիսի կեանքը.—երկար չէ կարող և չը պիտի նա տեսի...
* * *
Կեկունքների 4.—Այն օրվայ խայտառակ դէպքից յետոյ Պիղատ վասիլիքը չը լաված և չը տեսնված հանգստութեամբ է վարվում տանը: Այսօր ինչպէս երևում է, բոլորովին տեղից չէ դուրս եկել: Ժամի վերջին, երբ վերադարձայ դասից, զընտալ նրան տանը, բաղկավորում վրա նստած և խորասուզված ըստ երկուսի ծանր մտածութեան մէջ: Նրա մտեցայ նրան և ձայն տուցի, նա անշտապ բարձրացրեց զոտը և նայեց վըրա: Այն օրից յետոյ առաջին անգամ էր, որ նա աչք էր բարձրացնում իմ վրա. միշտ կը խուսափէր. խօսելու ժամանակ էլ աչքին մէջ չէր նայի:
—Եկար վերջապէս, ասաց նա մի այնպիսի

կողմից հանձնվելու և կատարվելու մեջ: Այդ կարևորությունը ինքն ըստ ինքեան հասկանալի է հենց նրանց կատարած դերից, քանի որ դրանց ձեռքում են կենտրոնացած, ինչպես ինչնեղից, գիտելի վարչական-պոլիտիկական և դատաստանական ընթացիկ գործերը:

Մեր գիտական հասարակությունները ներքին կենտրոն մասին խոսելիս սովորություն է դարձել այն միտքը յայտնելու, որ դրանց բարոյական և մտաւոր կենտրոն վրա ահագին ներգործություն ունեն գիտական քաջանան և գիտական վարժապետը:

Այդ միտքը ճիշդ է. բայց ճիշդ է ոչ թէ գործնական, իրական տեսակետից, այլ տեսականապես, քանի որ նախ ներկայումս մեր գիտելի 95% գործը են գիտական վարժապետներից, իսկ երկրորդ գիտական քաջանաների ազդեցությունն էլ ժողովրդի վրա շատ աննշան է: Գիտական քաջանան և վարժապետը մեծ ներգործություն կարող էին ունենալ ժողովրդի վրա, նրանք կարող էին մինչև իսկ այս կամ այն ընթացքը տալ գիտելի բարոյական կենտրոն, ազդելով մինչև անգամ նրա տնտեսագիտական դարձման վրա, բայց դրա համար հարկավոր է, որ մեր գիտելիները լինեն գիտական դարձման և գիտական վարժապետներ, որոնք, տարաբաղդաբար չը կան, և երկրորդ անհրաժեշտ է, որ մեր գիտական քաջանաները իրանց մտաւոր դարձման մեջ և պատրաստակամութեամբ ընդունակ լինեն ղեկավարելու իրանց ժողովրդի բարոյական կենտրոն, այս կամ այն հայեցակետը մտցնելով նրանց հայեացքների, նրանց բարոյական աշխարհայեցողութեան մէջ:

Սակայն ներկայումս այդ բոլորը ընդունելի չունի և ուշադրութեամբ հետևելով գիտական կենտրոն, մարդ հնչում է համոզվում է, որ այնտեղ այժմ առաջին դերը կատարում է գիտական տանուտը, գիտական դատաւորը հետ միասին:

Առանց չափազանցելու կարելի է ասել, որ գիտական տանուտերից է կախված գիտական ժողովրդի ներքին խորագիտելիքը: Գիտելի մարդը գիտական վարժապետի փոխադարձ բարեկամական յարաբերությունները, հողային և ջրային վեճերի շուտափոյթ դադարումը, գիտական հարկերի հաւաքելու կանոնաւորությունը, և մինչև իսկ գիտական դպրոցի կանոնաւոր դարձումը, — և այդ բոլորը գլխաւորապէս այն պատճառով, որ մեր գիտական ժողովուրդը զուրկ է անկախ գործելու ձգտումից, և միշտ սիրում է սրա կամ զործելու ձգտումից, և միշտ սիրում է սրա կամ նրա ղեկավարութեան ներքոյ գտնվել: Եթէ տանուտը և գիտական դատաւորները կաշառակեր, անհոգ, խռովարար, կողմնապահ և անբարեխիղճ են, — այդ կը նշանակէ, որ գիտական հասարակութեան մէջ անպակաս օրինակ լինեն կոխները, խտրողները, հողային վեճերը, կուսակցութիւնների բաժանվելը, խեղճերին ճնշելը,

գործողութիւնները և յափշտակութիւնները. այդ կը նշանակէ, որ գիտական կենտրոն մէջ գոյութիւն ունի մի ց և ց, որը անդադար պիտի կրծէ ժողովրդի խորագիտելիքը և ներքին անդորրութիւնը...

Ուրեմն, եթէ գիտելի տանուտերի և դատաւորների նշանակությունը այնքան մեծ է, ինքն ըստ ինքեան երկու հարց է առաջ գալիս. առաջինը՝ այն է, թէ ինչպիսի մարդիկ են մեր այժմեան գիտական տանուտերները և դատաւորները ընդհանրապէս, և երկրորդը՝ ինչ միջոցներով կարելի է գիտելիում ունենալ լաւ դատաւորներ և տանուտերներ, որոնց հանգիստ խղճով կարելի լինէր յանձնել ժողովրդի վարժական և դատաստանական գործերը:

Այդ երկու հարցերի մասին մինք կը խօսենք մի ուրիշ անգամ:

ԳԻՒՂԱՏՆԱՅԵՍԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԺՈՂՈՎՐ

Փետրվարի 8-ին կայացաւ Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան ընդհանուր ժողովը: Հերթական հարցերը վերջացնելուց յետոյ, ժողովը լսեց ընկերութեան անդամ պ. Դավթիսի ղեկուցումը Անդրկովկասում ձիթենի մշակելու մասին: Ընդհանրապէս հաշվելով երեւում է, որ իւրաքանչիւր տարի դաւանողան երկիրներէն Ռուսաստան ներմուծում է մինչև 1 1/2 միլիոն պուլէ ձիթ, 10-ից մինչև 15 միլիոն բուրլու արծողութեամբ: Ձիթենու մշակելուց Ռուսաստանը կարող է մեծ օգուտ ունենալ, և ղեկուցանողը կարծիքով այդ բոլորի մշակութիւնը կարող է աջակցել Անդրկովկասում: Իսկ նրա մշակութեան աջող փորձերը՝ արդէն մի քանի անգամ եղել են: Ղրի մի հարաւային կողմերում, վարդու ձիթենի է մշակվում. ձիթենի մեծ քանակութեամբ մշակվում է և Արթուրի շրջանում. իսկ Անդրկովկասի մի քանի կողմերում եղած փորձերը, ղեկուցանողը կարծիքով, ցոյց են տալիս, որ դրա մշակութիւնը արդէն աւելի կարող է լինել: Ի նկատի ունենալով այդ բոլորի մշակութեան օգուտէն հետևանքները, ղեկուցանողը առաջարկում է հիմնել մի փոքրիկ օրինակելի պլանտացիա, ցանկացողներին ձիթենու ծառերից տալու համար, ծառնոցները Այգեդործական դպրոցի աշակերտներին այդ բոլորի մշակութեան հետ, և հրատարակել տեղական և ռուսերէն լեզուներով մի ձեռնարկ՝ ձիթենու մշակութեան վերաբերմամբ: Իր ղեկուցման վերջում ղեկուցանողը խօսեց և մի քանի ուրիշ բոլորի մշակութեան մասին:

Ձիթենու մշակութեան հարցի մասին լիքնաբերութեամբ եղանակով և ընկերութեան անդամներից մի քանիսը հակառակելով ղեկուցանողին՝ այն միտքը յայտնեցին, որ ձիթենու մշակութիւնը այնքան ձեռնուող չէ, և ոչ էլ յարմար մեր երկ-

րի պայմաններին, որքան կարծում է ղեկուցանողը:

Դրանից յետոյ ընկերութեան թղթակից անդամ պ. Ֆոն-Կլիման ղեկուցում արեց թէյի ծառի մշակութեան մասին Անդրկովկասում: Զեկուցանողը այն կարծիքն է յայտնում, որ Անդրկովկասի շատ տեղերում թէյի մշակութիւնը հնարավոր է: Այդ հարցի վերաբերմամբ էլ թեր և զէմ կարծիքներ եղան, — բայց թէյի մշակութեան հարցը, ինչպէս և նախորդ անգամներում, որոշ հետեւանքի չը հասաւ:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, փետրվարի 9-ին

Խնդրում ենք ձեր լրագրի էջերում տեղ չնորհել հետեւեալ տողերին:

Ինչպէս արդէն յայտնի է հայ հասարակութեանը, ներքոյ ստորագրողներս, ի նկատի ունենալով ընդհանուր ջիւղ մ ցանկութիւնը՝ հանդուգնաբար ֆիզիկական և հոգեկան վրա կառուցանել մի արժանաւոր մահաբժան, յանձն էինք առել ընդունել այս նպատակով հասարակութիւնից նուերներ և հողալ յիշեալ մահաբժանի կառուցման մասին: Այժմ պատիւ ունենք հայ հասարակութեանը ներկայացնել մինչև օրս մեղ մօտ հաւաքված նուերների հաշիւը:

Ստացված է «Արձագանք» միջոցով: 1) Բաղդուկ, եղբարք Ն. և Ա. Աբելեաններէն—10 բ., 2) Յարկիւնի հայերէն, պ. Ա. Զաւթախանովսկի ձեռքով հանգանակած—43 բ., 3) Թիֆլիսի Կուկիս թաղի Թանդուկեան ուսումնարանի վարժուհիներէն—12 բ., 4) Գորուց, պ. Ս. Դիտանի ձեռքով հանգանակած—13 բ. 60 կ., 5) Պետերբուրգի, պ. Բ. Բաշինջադեանի ձեռքով հանգանակած—50 բ., 6) Մերկից, պ. Զուպուդ Սաբուխանեանի ձեռքով հանգանակած—33 բ., 7) Ասիական հայերէն—30 բ.: Ստացված է «Նոր-Գարս» միջոցով: Գորուց—6 բ. և Հին-Նախիջևանից 19 բ., նոյնպէս և 19 բուրլի յօդու Բաշիֆիլի դրքերի հրատարակութեան:

Ստացված է խմբի գանձապահի անունով: 1) Նոր-Նախիջևանից, պ. Ստեփան Տէր-Կարապետեանից—10 բ., 2) Նոր-Բայազետից, պ. Մամիկոնեանի միջոցով—26 բ. 33 կ., 3) Մարտիկ հայերից, պ. Հէլեռեանի բանկային դրամներով միջոցով—18 բ. 88 կ., 4) Ստեփանի հայերից, Սուրենեան սրբաշինքի միջոցով—107 բ., 5) Մոսկովայի հայերից, եղբարք Ժամհարեանների միջոցով—563 բ. 50 կ., 6) Աղդաշի հայերից, պ. Աղասարեանի միջոցով—12 բ., 7) Վերին-Արտուրից, պ. Ս. Հախնադարեանի միջոցով—57 բ.: Ընդամենը մի հազար տասն և մէկ բուրլի 31 կ. յօդու մահաբժանի և 19 բուրլի յօդու Բաշիֆիլի աշխատութիւնների հրատարակման:

Զօգուտ մահաբժանի ժողոված վերոյիշեալ դուրսերից խումբս ծախսել է. փոստային թղթի,

ծրարների, մարկաների, նամակներ տպելու, հետագրի և բանկային արժանեքի մարկաների համար ընդամենը տասն ու հինգ բուրլի 40 կ.: Դրանք մոտեցիկ գոյս գալով, յօդու մահաբժանի ֆուտ է 995 բուրլի 91 կ.: Այս գումարից դրած է Թիֆլիսի առևտրական բանկում, մի տարի ժամանակով, 5 1/2%-ով անհետեւ համար 700 բ., № 15312 տոմարով, և 200 բ. № 15578 տոմարով: Մնացած գումարը 95 բ. 91 կ. մնում է առհասարակ գանձապահի մօտ, աչքի առաջ ունեցած կարևոր ծախսերի համար մահաբժանի վերաբերմամբ:

Ներկայացնելով այս հաշիւը հայ հասարակութեան, անհրաժեշտ ենք համարում յայտնել, որ մեծանուն մատենագիրը դերեզմանի վրա խմբիս նախագծած հոգակալ մահաբժանի համար այս գումարը սակաւ է: Ի նկատի ունենալով Բաշիֆիլի վայելած խորին համակրութիւնը, ի նկատի ունենալով այն հասարակութիւնը, որ իր սիրեցեալ բանաստեղծի դադարի վրա՝ սկսած Մանչեսթր ու Մարսելից մինչև Կովկասի խուլ անկիւնները՝ մի ու կէս օրվայ ընթացքում ուրեց մօտ հարիւր շքեղ պսակ, մենք վստահանում ենք յուսալ, որ նոյն հասարակութիւնը կը փափակէ յանուն նոյն իսկ իր ազգային պարծանքի, բազմապատակ վիպասանի նշխարները ամբողջած տեսնել մի փառապաշարժանի տակ:

Այն հասարակութիւնը, որ դիտէ արժանաւոր կերպով դարձաւ իր հուշակաւոր գործիչի անմահ յիշատակը, կարող է և իր հասարակական ինքնահանապաշտի և հպարտութեան դրօշակը բարձր պահել մարդկութեան աչքում:

Բաշիֆիլի ինքն իրան չէ պատկանում Բաշիֆիլի վեց միլիոն մի ազգութեան պարծանքն է, հետեւաբար հայ հասարակութիւնը այդ պարծանքը պէտք է արժանաւոր կերպով դնահատէ:

Անհրաժեշտ է յօդու մահաբժանի հանգանակութիւնը շարունակել: Եւ այս յուսով խումբս այժմ յանձնեց իր անդամակից նկարիչ պ. Գ. Բաշինջադեանին պատրաստել մահաբժանի պրօէկտի օ սկիւղը, որը և պատրաստելուն պէս կը յանձնվի մի առանձին մասնաժողովի մշակելու համար, և կը հրատարակվի ի տես հասարակութեան:

Խմբի անգամներ՝ Գ. Մերկուցեան, Ա. Եսայան, Ս. Զեկուցի, Գ. Բաշինջադեան, Դիւլանդադէ, ինժեներ Գրիգոր Արապետեան:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Երևան, 29 յունվարի

Թէ որքան մեծ է բնական գրաւմաների օգուտը, մահաւանդ երբ նա վերցրած է ժողովրդի ներկայ կենտրոնը՝ այդ մասին խօսել անգամ աւելորդ է:

Ինչ խօստացածը: Այսօր, ինդուստրիա, ժպտալով, ներս մտաւ մեզ մօտ բարեկամահա: Գրկախառնիկով ինձ հետ, շնչապառ պատմում էր թէ՛ ինչպէս է հարկադրել իր «ծերուկին» Պետր Վասիլիին համար պաշտօն գտնելու, և թէ բանը մնացել է, որ վերջինը շնորհի գերազանցութեան, այո, շնորհի գերազանցութեան, խընդիր մատուցանէ,—բայց, աւելացրեց նա,—про-тивный старичекъ, болѣе тысячу рублей въ годъ не общалъ! Довольно-ли будетъ это?...

Չը գիտեմ դպրոցական մեր անդեալ կենտրոն անհոգ յիշատակն էր, թէ Սոնիայի եւ ու կի բնաւորութիւնը, նրա կենդանի և փափուկ սրտի ճնշումը, կամ դուցէ մի այլ պատճառով—չը գիտեմ, միայն թէ եւ էլ անպայման օրախառնութեամբ էի արամադրվել: Այդ ժամանակ՝ կատեւ, ուրիշ աշխարհում չըլիս լինէի: Սոնիայի զնալուց յետոյ երկար ժամանակ նրա գրաւիչ և քաղցր ազդեցութեան տակն էի մնացել: Մոտացել էի կենտրոն ամենայն դաւանութիւնները, ձախորդութիւնները, չարս ու յոռին...:

Դրանով Պետր Վասիլիին եկաւ: Հաղորդեցի նրան գործի էությունը: Դառնալով Դառնալով Մոտալի է՝ առանց յետաձգելու՝ հենց էտեց ինդրը տալ շնորհի գերազանցութեան, Սոնիայի «ծերուկին»: Աստուած բարին առաջնորդէ: Եւ ինձ դուցէ բաղաւոր համարեմ, եթէ այս դէպքը Պետր Վասիլիին համար օգուտ ունենայ: Ո՞վ գիտէ: Կարելի է որ Աստուած խղճալ մեղ վրա, խղճալ մեր այս անմեղ էակի վրա:

(Կը շարունակվի)

գործակալ ձայնով, որ երբեք լսած չէի նրա՝ ինչ: —Այո, եկա... Դասերից յետոյ գնացի թէյ և շաքար գնելու, յետոյ ամառիկով մօտը գնացի, տան վարձը տալու. յետոյ այս բանը գնեցի... պզտիկի համար... այսօր ես հարուստ եմ՝ ամառական ստացալ:

—Милая, родная, славная, хорошая! ասելով գրկեց ինձ և սկսեց ձեռներս համբուրել, սկսեց ինձ հաւատացնել թէ ես սրբուհի եմ, թէ նա ինձպէս կնոջը արժանի չէ... չը գիտեմ թէ դարձեալ ինչեւ, ինչեւ:

Չը նայելով այս անախտներին գրուանքին, իմ սիրտը մնացել էր սառած: Մեղ՝ կանանցս վրա՝ գգուանքը միշտ մեծ ազդեցություն ունի, և այս անգամ էլ այն, ինչ որ բարձրանում էր սրտիս մէջ, ոչ այլ ինչ էր՝ եթէ ոչ լոկ կարեկցութիւն այս ընկած խեղճ մարդու վրա, որի հետ ձեռնադրելու բերումը իմ կենտրոն կապած է: Այս բոլորն ակնհաս տեսնում էի այն անդունդը, որը մեղ բաժանում էր միմեանցից: Ինչ անեմ ես, երբ նրա համբուրը, նրա գգուանքը ուրիշ ազդեցություն չեն կարողանում ունենալ իմ վրա: Ես համբերութեամբ կարող եմ տանել նրա խնդ ու խելար վարմունքը, կը ներեմ նրան և անցեալ օրվայ պէս խայտառակութիւնները. թող խայտառակ է իր հետ ինձ էլ: Բայց թէ այս տեսակ թուի սերը չի գտնի իմ մէջ փոխադարձութեան մի նշույլ անգամ—այդ ինձ համար շատ պարզ է: Եթէ իմ կամբից կախված լինէր նրան սիրելը, գուցէ այդ էլ բուն կերպով հարկադրէի ինձ, բայց ինչ արած, երբ ակնյայտնի տեսնում

եմ, զգում եմ, որ այս կէտը կամեցիս անելու է, կամեցիս հետի է: Ինչպէս և ինչ միջոցով հարկադրեմ սրտիս, որ նա ջիւղ դրացուներեւրով բաբախէ: Միթէ կայ այնպիսի հնարք, այնպիսի ճար, որ կարողանար կերպարանափոխել ինձ ու տից մինչև գլուխ, վերածնել ինձ նոր սրտով, նոր դրացուներեւրով, նոր ուղեղով և ես խելագարի պէս սիրահարվէի նրա վրա... Այո, որքան էլ որ մտածեմ եմ, զալիս եմ միայն այն եղբայրացիութեանը, որ ձեռնադրելով, կապելով ինձ օրա հետ, կարող է միմիայն յարուցանել իմ սրտի մէջ՝ այն էլ բաղաւոր դէպքում՝ կարեկցութիւն այս խեղճ ընկած մարդու վրա իսկ սեր—հրեք...

Անկարելի է նկարագրել այն վիճակը, որ բարձրացել է քաղաքում անցեալ օր մեր տան մէջ կատարված դէպքի առկիթով: Այսօր փողոցից անցնելիս մի երեխայ մօտիցս վազելով գլխապատառ մտաւ իրանց տուն և մօրը կանչեց դէպի բազի դուռը թէ՛ «մամա, մամա, արի շուտ արի շուտ... կնիկը գալիս ա...»: Ամբողջ ընտանիքը զուրս թափվեցաւ ինձ վրա նայելու: Գլխաւոր եւ անցեց գնացի, դադար ինձ վրա նրանց հետաքրքիր հայեացքի շանթերը: Այդ ոչինչ, սրանից վատ դրութիւններն էլ տեսնում եմ համբերութեամբ: Եւ աւելի քստմնելի բոլորն այն է, երբ, նայելով աչքիս մէջ, հարցնում են իմ ամուսնու մասին, շքեղ ինչպէս ա, ինչով ա հիմա պարապում. միտքը ինչա հիմի. զօրձ գտնւթէ չէ...»: Բիւ է մնում որ լամ այդ հարցերին պատասխան տալու տեղ, արտասուքը խղճում է ինձ, ամօթից գետնէ գետնի եմ անցնում: Ես

ինքն այժմ չը գիտեմ թէ՛ այդ պահուն ինչ պատահեալ եմ տալիս, ինչ եմ խօսում, կամ թէ ինչ է արտայայտում իմ պատկերը: Այն միայն գիտեմ, որ ով որ մի անգամ այդպիսի հարցերով դիմում է ինձ, էլ միւս անգամ բնաւ չէ կրկնում... Դառնալով դէպք պիտի ունենամ այդ ժամանակ... Այդ բոլորներն երբի նմանութիւն ունեմ անդանակ սպանվածներին, անկրակ աշխատանքներին...

Գիշերվայ թէյի ժամանակ Պետր Վասիլիին պատմեցի թէ՛ երեխայի այս լաթերը գնելու ժամանակ խառնութեամբ տեսնվեցալ Սոնիա Միլիկինի: Իմ դպրոցական մտերիմ ընկերուհու հետ, որը այժմ մեծ աստիճանաւորի կնիկ է: Խանութից նրա հետ միասին դուրս եկանք. խօսելով հասանք այն կէտին, որ ես միանգամայն պարզաբանութեամբ ասացի նրան թէ իմ մարդը պաշտօնի, կամ մի որ և է պարապմունքի կառուցութիւն ունի: Դա ծիծաղ հանաքով ասաց, և կը պատմեմ «ծերուկին», որ ըր մարդու համար գործ գտնի: Եւ դու կը տեսնես, աւելացրեց նա,—որ նա, առանց այլ և այլի կը կատարէ կամեցածս. ես նրան «բաշինջադեան» եմ պահում. իմ խօսքը նրա համար օրէնք է: Առաջ նա առաւ մեր հասցէն, որ կարողանայ լիակ տալու ինձ—ինչ հետեւեալ կունենայ նրա «հրամանը», յետոյ խոստացաւ անձամբ գալու ինձ մօտ:

Այս լուրը շատ ուրախացրեց Պետր Վասիլիին. նա գրաց իրան եօթներորդ երկնքում:

Գեկտեմբերի 8:—Սոնիա Միլիկինի վրան կատա-

Բայց կարելի է արդեօք որ և է թատրոնական գրողաճիւղ մի բան հասկանալ և նրա արժանաւորութեան կամ անարժանաւորութեան մասին մի որոշ գաղափար կազմել, երբ նրան ներկայացնում են աղանդած, այս կամ այն տեսիլը դերասանի քմահաճութեան համեմատ փոփոխած, տեսիլներ և ամբողջ գործողութիւններ աւելացրած կամ պակասեցրած, ոտի տակ տալով պիէսայի իսկական գաղափարը և պահելով միայն դերակատարներին յարմար տեսարանները, — ի հարկէ, ոչ: Վերջապէս ինչ կըլծող նշանակութիւն կարող է ունենալ բեմը, երբ դերասանը աչքակապութիւն անելով, մի և նոյն պիէսային մի քանի վերնագրերներ կը տայ, տեղին նայելով կը փոխի գրողաճիւղի միտքը, և այլ այսպիսի խաղերայութիւններ: Այդ խօսքերը գրելու առիթ տուեց ինձ հետեւեալը:

Մի քանի մանր փորձերից յետոյ ես համարձակութեան ունեցայ գրել պարսկական կեանքից Երևանի թուրք բարբառով մի պիէսայ «Թաւաճեալը դիւժման կազանը»: Երբ առաջին անգամ ներկայացվեց Երևանի թատրոնական բեմի վրա:

Ներկորող անգամ այդ պիէսան տրվեց Թիֆլիսի բեմի վրա և փոխելով վերնագիրը, երբի բարբառով գրաւելու համար՝ փոխանակ «Թաւաճեալը դիւժման կազանը» ափիշայով դրուած էր «Փայտալի շահ»: Այդ անունը մինչև անգամ պիէսայի մէջ չը կայ, այլ կայ Փայտալի Միլոյա Դահադը: անունը: Այդպիսի անեղբայր փոփոխութիւն անողը դերասան Սաֆրազեանն է եղած:

Առաջին ներկայացումից յետոյ ինձ համար շատ ցանկալի էր աւելի մեծ բեմերի վրա տեսնել այդ պիէսայի նոյնութեամբ ներկայացումը և կարող, թէ արդեօք ինչ կարծիքներ են յայտնուած պիէսայի լաւ կամ վատ կողմերի մասին:

Բայց այդ անկարելի եղաւ: ամեն բան անելու ընդունակ դերասանների չորսուկ: Յաւելով եմ յայտնում, որ Բաբուսը այդ պիէսան երբորդ անգամ ներկայացվել է ոչ այնպէս, ինչպէս պէտքն էր: Այդտեղ էլ դերասան Սաֆրազեան, բացի այն, որ յիշեալ պարտն այդ դեռ ես չը տպագրված պիէսայի ներկայացման համար նախապէս չէ ստացել իմ համաձայնութիւնը, դեռ ես նա թոյլ է տուել իրան այդ գրողաճիւղը աւելացնել և պակասեցնել ամբողջ տեսիլներով ու գործողութիւններով, և կերպարանափոխել ինչպէս ցանկացել է:

Այլ ևս առաջ ունենալով տան այդ տեսակ ստոր վարմունքը մի կողմից, և իմ գրողաճիւղ անաչառ դատաստանի առաջ դնելու մեծ օգուտը միւս կողմից, ես հարկաւոր եմ համարում այս երկուստեղով յայտնելու ձեռք լրագրի միջոցով, որ այսուհետեւ այդ պիէսայի և միւս անտիպ պիէսաների ներկայացման իրաւունքը ինձ վերապահելով հանդերձ՝ ես մեծ ուրախութեամբ թոյլ կը տայի նախապէս իմ համաձայնութիւնը ստացողներին ներկայացնել այն պայմանով, որ պիէսան խաղացվի բեմի վրա անփոփոխ և անարատ, այնպէս, ինչպէս դուրս է եկել իմ գրել տակից, առանց նրա մէջ ամենափոքր փոփոխութիւն անգամ գործելու: Պէտք է նկատեմ և այն, որ պիէսայի ձեռագրի միայն այն տեսակը ճիշդ կարող է համարվել, որի ձեռագիրը դրած կը լինի իմ հաւատարմանցով ստորագրութիւնը:

Վասակ Մաղաթեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Հրատարակվեց «Մուրճ» ամսագրի երկրորդ, փետրվարի տարւակը: Այս համարը աւելի էլ անգին է, քան թէ առաջինը: Կեանք չը կայ ամբողջ այդ հրատարակութեան մէջ և այն մարդն էլ, որը ընտելացած է ծանր ընթերցանութեան, որի համար կարգաւոր, առհասարակ ամենամեծ վայելչութիւն է կազմում կեանքի մէջ, — անագին ջանքեր պէտք է գործէ «Մուրճի» յօդուածները մինչև վերջը կարգաւոր համար: Ինչ որ անտանելի է այդ ձանձրացուցիչ, անկենդան, մեռելային հրատարակութեան մէջ, այդ այն է, որ դրա լուրջանչիւր յօդուածը, լուրջանչիւր միտքը, լուրջանչիւր սողը, ընդարձակ յօդուածներից ըստ կամ մինչև խմբարարական պատասխանները, կը ընտելան անտիճանի անձնավստահ, մեծամիտ, անձնապաշտ, վարդապետական և անսխալական ձևը:

ԻԳՊԻՊՅ մեղ գրում են, «Յուլիարի 28-ին

երկնայան, տեղիս ուսուցչական խումբը տուեց իր երկրորդ գրական երկուն: Հանդիսականները բազմաթիւ էին և համարեա ըրոր տուտակները ծավալել էին: Երկուն շատ լաւ տպագրութիւն գործեց ունեցողներին վրա, մասնաւոր շատ դուր եկաւ ամենքին ալ: Շաւարշեանի ընտրած նիւթը «Գիւղական քահանայի նշանակութեան» մասին, որտեղ պարունը չօտիկեց կենսական մի քանի հարցեր և իր կողմից միջոցներ առաջարկեց գիւղական հողերակալութեան դրութիւնը բարձրացնելու մասին:

ԴԻԼԻՍՆԻ մեր թղթակիցը գրում է մեզ որ սրտնից մի քանի օր առաջ Գիւղական 22 փոքր հեռագրութեամբ, Երևանի ձանապարհի վրա գտնվող Սիմօնովսկա կոչված մալականների գիւղի փոստային կայարանի վերատեսուչը առաւօտեան մենակ որսի է դնում մօտակայ անտառը, բայց ողորմելի մոլորվում է անտառում բուքի պատճառով, վեր է ընկնում ձիւնի մէջ, և ամբողջ գիշերն էլ մնում է անտառում: Միւս առաւօտը 50-ի չափ մարդիկ գնում են անտառը, կորածին որսնելու համար և գտնում են ողորմելուն կիսով չափ թաղված ձիւնի մէջ: Նրան թէ կենդանի են բերում գիւղը, սակայն խեղճի ստաները ցրտահար են լինում, այնու ամենայնիւ յոյս կայ որ նա չուտով կը լաւանայ:

ԲԱԳՈՒԻ երիտասարդ հայ-աւետարանականների մի խումբ խնդրում են մեզ յայտնել իրանց անկեղծ շնորհակալութիւնը այն հայ խմբագրիչներին, որոնք այս տարի իրանց պարբերական հրատարակութիւններին մի օրինակը նուիրել են յիշեալ երիտասարդների գրադարանին:

Կ. ՊՈՒՍԻ մեղ գրում են, որ «Մանգուլիէի էֆքիւր» լրագիրը, որ մի ամեալ դադարման էր դատարկացրած, այժմ Տպագրական տեսչութեան կողմից վերականգնուած դադարեցրած է, էլ ի վեց ամսով:

Ինչպէս մեղ գրում են Կ. ՊՈՒՍԻ, յօդուած Միացեալ ընկերութեան փետրվարի 18-ին պիտի պարահանդէս տրվի: Յայտնի է, որ յօդուած այդ ընկերութեան ամեն տարի պարահանդէս է տրվում, որից ընկերութիւնը ստանում է մօտ 10 հազար բուլլի արդիւնք:

ԷՐԶՐՈՒՄԻՑ ստացված լուրերից երևում է, որ այնտեղի առաջնորդ Արիստակէս եպիսկոպոսը հրաժարվում է իր առաջնորդական պաշտօնից:

ԱԼԷԲԱՍՆԻԿՈՊՈԼԻՑ մեղ գրում են, «Այստեղի հայոց դպրոցի ուսուցչներից մէկը՝ յօ. անուանով, սովորութիւն ունի աշակերտներին ծննդու ջարմանալի է թէ ինչպէս մի մեծ քաղաքի դպրոցում, որը ունի վարդապետ, տեղի է ունենում այդպիսի անխախտ վարմունք»:

Մեղ գրում են ԱԼԷԲԱՍՆԻԿՈՊՈԼԻՑ հետեւեալը: «Անցեալ տարի հոգ. իշխանութիւնը, համաձայն Մարտիրոս քահանայ Տէր-Պողոսեանի տուած հրաժարականի, արձակեց նրան հողեր կառավարութեան մէջ տասն և հինգ տարի վարած անդամական պաշտօնից: Թէ որչափ բարեխիղճ կերպով կատարեց այդ քահանան 15 տարվայ ժամանակամիջոցում իր յանձն առած պարտականութիւնները, այդ յայտնի է ամբողջ Ալեքսանդրօպօլին: Այդ առիթով չհնք կարող ուղարկութիւն չը դարձնել մի հանգամանքի վրա, որ տակաւին մեծ նշանակութիւն ունի և կարող է ունենալ ապագայում: Ալեքսանդրօպօլի գաւառը, որպէս գուտ հայաքանակ գաւառ, իր հարկաւոր հայ գիւղերով ենթակայ է այդ գաւառի հողեր կառավարութեան, որտեղ վճռվում են նրա եկեղեցական-դպրոցական գործերը, ստանում են և տալիս են գանազան եկեղեցապատկան ուսումնական արդիւնքներ, մի խօսքով ուղղութիւն են տալիս նրա գրեթէ բոլոր եկեղեցական և դպրոցական գործերին: Այս բոլորը ի նկատի ունենալով, անկասկած ցանկանում էր, որ այդ հրաժարվում անդամի փոխարին հողեր իշխանութիւնը նշանակէր այդ պաշտօնին մի ամբողջ գործադու տար ժողովրդի պահանջներին, գործեր անշահասէր և անկաշառ կերպով ընդհանուր շահերի համար, և որ գլխաւորն է, յարկանք ներշնչել ժողովրդի մէջ իր անխառն, անաչառ և խաղաղասէր վարք ու բարքով»:

«Մշակի» անցեալ համարում թւելով ամենանշանաւոր պատկերներ, որոնք դրվեցան կոմս Լօրիս-Մէլիքովի դագաղի վրա, մոռացանք յիշել արեւելիկ պատկերից մէկը, այն է Կարսի հայոց հասարակութեան, որի ներկայացուցիչն էր պ. Վահրամ Մուրաֆեան:

Գաւառական դանդաղ քաղաքներից և գիւղերից վերջին ժամանակներս սկսել են մեղ անդադար տեղեկութիւններ հաղորդել, որ տեղական այս կամ այն դպրոցներում վարժապետները ծեծուած են աշակերտներին, և որ առհասարակ ծեծը գործադրութիւն է դառնում դպրոցներում: Առանձին առանձին չարձանագրելով մեր լրագրի էջերում այդ տեղեկութիւնները մանրամասնութիւնները, հարկաւոր ենք համարում մանկավարժական ասպարիզում գործող ուսուցիչներին զգուշացնել այդ անմիտ և անպայման վնասակար ընթացից: Մեր դպրոցներում գործող փոքր ի շատ հասկացող մանկավարժների պարտաւորութիւնն է հաւածել դպրոցներից այդ խալիֆա՝ անուր չարատարներն այդ տեսակ հակամանկավարժական միջոցների գործադրութեամբ: Միթէ կասկածողներ կան, որ ծեծը օգուտ տալ կրթութեան գործին չէ կարող: Եւ վերջապէս միթէ ամօթ չէ բերում հայոց դպրոցներում գործողներին այդ տեղեկութիւնը...

Փետրվարի 1-ին, Պետերբուրգում, ուսուց արգիւնագործութեան և աւետարան նպատակով ընկերութեան ընդհանուր ժողովում նաւթային գործին լաւ տեղեկ պ. Լազարով կարգաց մի դեկուցում ուսուց նաւթի արդիւնաբերութեան այժման դրութեան մասին: Ժողովին ներկայ էր ահագին բազմութիւն: Իր զեկուցման միւս մասում, որը պիտի կարգացվէր նոյն ընկերութեան փետրվարի 8-ի ժողովում, պ. Լազարով պիտի խօսէր այն վնասի մասին, որը տալիս է Ռուսիայի եղբայրների գործունեութիւնը ուսուց նաւթային գործին:

Տալիքներ քաղաքը քաղաքային ինքնավարութիւն է ստանում: Վճռված է գործարկել այդ քաղաքում 1870 թվականի քաղաքային պօլիտեհիան, քաղաքապետը պիտի նշանակվի կառավարութիւնից և պիտի օտանայ տարեկան 3,000 բուլլի ուժիկ քաղաքային փողերից:

Մեղ հաղորդում են, որ վիպագրող Պերճ Պերճեանի նիւթական գործութիւնը մի փոքր բարձրելու համար նրա բարեկեցիկների մի խումբ մտադրութիւն ունի նորից արձանդել վիպագրողի գրական գործունեութեան քանակութեամբ յօդուածներ տնտեսական հարցը: Պերճ Պերճեանի գրական գործունեութեան յօդուածն տնտեսական մի համակարգի ցանկութիւն է, և մենք ցաւում ենք միայն, որ այդ յօդուածն տնտեսական ցանկագրողները իսկ թէ այժմ այդ խնդիրը նորից յարուցանելով, կը համենա արդեալ իրանց գլխաւոր նպատակին, այն է վիպագրողի նիւթական գործիւնը մի փոքր բարձրելուն: — այդ դժուար է ասել: Բամենայն դէպս նպատակը գտնվի է:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏԵԼԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԹԻԻՐԲԱՅ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

Կ. ՊՈՒՍԻ «Արեւել» լրագրում կարդում ենք հետեւեալը: «Ամենայն Հայոց Հայրապետ» Պատրիարք Հօր Կոնդակ մը ուղղած է, որով պապական ծանուցեալ կոնդակին առթիւ ցաւ յայտնել յետոյ կը ծանուցանէ թէ բոլոր եկեղեցականաց ժողովրդականաց Շնորհաւարական թուղթ մը դրկած է զգուշացնելու համար շուտայ խոստումներէ: Հայրապետական կոնդակին ընթերցումը տեղի պիտի ունենայ Կոնդակին Ժողովոյ այս աւուր նստիլի մէջ: Հայրապետական ընդհանրական թուղթն, ուղղեալ առ եկեղեցականաց, թարգմանուած է միանգամայն լատին և ֆրանսերէն լեզուաց:

Կ. ՊՈՒՍԻ «Փոռն» անունով լրագիրը հաղորդում է հետեւեալը: «Պատրիարք հայրը տնտեսով որ Պատրիարքարանի մէջ Թուրքիոյ եկեղեցական պաշտօնից կատարեալ միճակագրութիւնը չը կայ, որոնց շրջաբերականաւ պատուիրել առաջնորդարանաց որ իրենց թեմին մէջ գտնուող ամեն սա-

տիճանի եկեղեցականաց մանրամասն վիճակագրութիւնը դրկեն. այսինքն՝ նոցա ծննդեան թուականը, ծննդավայրը, նախ քան եկեղեցականութիւն ունեցած արհեստն, որոյ ձեռքը և ուր եկեղեցական կարգ առնուին, ինչ պաշտօններու մէջ գտնուած լինելն, և այլն, մի առ մի նշանակելու Նորին Սրբադնութիւնը միանգամայն հրամայած է որ Պատրիարքարանի մէջ սոյն վիճակագրութեան համար յատուկ տուած մը սահմանուի և դառնուի ընդ տրամադրութեամբ Մաղաքիս եպիսկոպոսի Օրմանեան»:

Թիւրքահայոց լրագիրները հաղորդում են հետեւեալ տեղեկութիւնները:

«Պատրիարքարանի վերաշինութեան յանձնաժողովն իւր առաջին նիստը գումարեց ի խորհրդարան Բերայի ընդ նախագահութեամբ Պատրիարք Հօր Գանձապետովն նախնական խորհրդակցութենէ և կարծեաց փոխանակութենէ յետոյ, խնդրեց իւր անդամակցներէն հարտարապետ Յովնանէն Եֆէմով Աղնաւորեմէն՝ Պատրիարքարանի արդի շէնքին յատակաձևը պատրաստել հանդերձ հարտարապետական մանրամասն ծանօթութեամբ, որպէս զի կարելի լինի նոր կառուցանելի շէնքին ընդարձակութեան ու ձևի մասին որոշում մը տալ: Շինութեան ծախքը պիտի հոգացուի աղայային ընդհանուր հանդանակութեամբ»:

«Գարակէօմրիկի Գանձապետովն արտասովոր նիստ մըրաւ, ընդ նախագահութեամբ Մաղաքիս եպիսկոպոսի Օրմանեան և ատենապետութեամբ Երեսուցիան Տիգրան Եֆէմովի: Սոյն գումարման ներկայ էին բոլոր անդամք: Գանձապետովն մասնաւորապէս զբաղեցաւ Հոգևորական վարժարանի մը հաստատման խնդրով: Այս առթիւ ընդարձակ ծրագիր մը պատրաստած էր Օրմանեան Սրբապետ, որ կարգաց դաս: Գանձապետովն նկատողութեան առնելով այդ կարևոր ծրագիրը կարծեաց փախանակութիւն մը կատարելէ և ինչ ինչ նախնական տնօրինութիւններ ընելէ յետոյ, որոնց յառաջիկայ չորեքշաբթի վերստին ի նիստ գումարել Հոգևորական վարժարանի հաստատման խնդրովն զբաղելու համար»:

«Պատրիարք Հօր տնօրինութեամբ Պատրիարքի քարոզիչ Գորեան Նիշէ վարդապետ վառնային համրով Երեւոյ կուղերի իւր այցելու հովիտ Նա պիտի այցելէ Ռուսիա, Բարդ, Մարսիլիա, Լոնտոն, Մանչէսթըր և՛ Եւրոպական միւս այն քաղաքներն ուր՝ հայ դպրութեանութիւնը կը գտնուին և հաւանաբար Ամերիկա եւ երթայ»:

Մեր ստացած ուրիշ տեղեկութիւններին նայելով, Նիշէ վարդապետը Պատրիարքի կողմից դրնում է Եւրոպա, որպէս զի համոզի այնտեղ հրատարակվող հայ լրագրիչներին թշնամական դիրք չը բռնել դէպի Թիւրքիան և դէպի Պատրիարքը:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

— Ընդունի լրագիրները ստացել են Հայաստանից տեղեկութիւններ վերջին ժամանակներս քրիտոքի ձեռքով կատարված աւերմունքների և արշաւանքների մասին: Դիարբէքիլի մօտ գտնվող Բէշգար և Մրէհիմար գիւղերը կողոպտվեցան և հրի ճարակ դարցան. այդ գիւղերում բնակվող քրիստոնեաները բռնաբարութիւնների ենթարկվեցան և նրանցից շատերին սպանեցին քրիտոքի: Թիւրքաց իշխանութիւնը կատարեալապէս սառնասրտութեամբ վերաբերվեց ժողովրդական այդ աղէտին և մինչև անգամ միջոցներ ձեռք չառաւ հաղածելու աւերակներին: Մասնաւոր բարբարոսաբար վարվեցին քրիտոքի Մրէհիմարի աղաքանակութեան հետ, ուր նրանք այրեցին 150 անոթ և ամբողջ աղաքանակութիւնը բոցերի ճարակ դարձաւ, որովհետեւ չարագործները փակել էին գիւղի բոլոր անցքերը: Հայ քր-

